

ներ, ինչպէս նաեւ ֆալսիֆիկատներ որոնք կը համաձայնին քաղաքէն դուրս թաղել օտարականներու զերեզմանոցին մէջ: Սակայն վկայաւորը Վահանի մահէն եօթը տարի յետոյ արդէն տեսած էր աղիւսակերտ եկեղեցի մը քաղաքին մէջ եւ երբ հրաչնեբը կը բաղմանան եւ ուխտաւորները կը շատնան, տեղացի քրիստոնեաները կը բարձրացնեն վայելուչ եկեղեցի մը:

Վկայաւորը որոշապէս կը բացատրէ թէ սուրբին մարմինը Վկայարան դրին եւ ոչ թէ եկեղեցի: Այսօր ալ Ռասաֆայի մէջ պարիսպներուն հարաւային կողմը կը դուռնուի քառանկիւն վկայարանը, որուն աւազ խորանը երեք կամարներու տակ կը պահէ իր հին կառուցուածքը: Վկայարանէն տարբեր եկեղեցի է Ս. Սարգիսի նուիրուած Պաղիլիֆան, որ կը բռնէ քաղաքին արեւելեան կողմը եւ աւելի վեհաշուք է իր բովանդակ շինութեամբ: Կը խորհրդաթէ պեղումներով կարելի պիտի ըլլայ երեւան հանել Ս. Վահանի դամբարանը, եթէ թափառական պետեւիներ չեն խախտած եւ աւերած զայն, ոսկեղէն հնութիւններ փնտռելու համար:

Երաշխաւորի վանահայրը թէպէտ իր համառօտ վկայարանութեան մէջ ամէն բան մանրամասն նկարագրած է Վահանի նահատակութեան ժամանակ, սակայն դեռ փոքրիկ տարակոյս մը կը մնայ անոր մահուան թուականին մասին:

Վկայարանը իր գրութեան մէջ կ'ըսէ. — «Արդ յետ ըմպելոյ զբաժակ պատուհասի աշխարհիս Հայոց ի հարիւր յիսուն եւ երկու թուականին Հայոց (կ'ակնարկէ Նախիջևանի հրկիզումը) այս գործեցաւ, եւ զերեսուն եւ չորք ամս կացին ի գերութեան մինչեւ ի հարիւր եւ ութսուն եւ վեց ամ թուականին, յորում հանդիպեալ վրակալութիւն սրբոյն Վահանայ...» (9):

(9) Սոփերք, ԺԳ. էջ 58:

Հեղինակին 152 Հայոց թուականը կը համապատասխանէ 703-ին, երբ կատարուած է Նախիջևանի եւ Խրամի հրկիզումը: Յաջորդ երկու թուականներն ալ՝ այն է նահատակութեան տարին, Հայոց 186 թուականին եւ գերութեան 34 տարին կու գան կը հանդիպին 737 թուականին, այն է Հիլամի ամիրայութեան 13րդ տարին. սակայն նոյն հեղինակին համեմատ, երբ յատկապէս կը խօսի Նախիջևանի ոճիրին վրայ, կը նշանակէ Մահմէտի 85 թուականը, որ կը համապատասխանէ մեր 704 թուականին, եւ կ'իշխայ Արդմեւելիքի վերջին տարին: Հարկ է ընդունել որ այս մէկ տարուան տարբերութիւնը կրնայ գրչագիրներու օրինակութեան սխալ ըլլալ. արդէն Հ. Արշան(10) 738-ին կը դնէ նահատակութեան տարին, Ապրիլ 18, երեկոյեան ժամը 3-ին աւազ երկուշաբթի օր: Սոյն թուականին համաձայն է նաեւ Յայսմաւուրը՝ զնելով ի թուին Հայոց ՃԶԷ (738), թուական մը զոր կ'ընդունին նաեւ Աւգերեան(11):

Անշուշտ Հայաստանի մէջ լսուեցաւ քաջ նահատակին դիւցազնական մահը, թէպէտ շատեր կը նահատակուէին այդ շրջաններուն, սակայն Վահանի դործը եւ զական էր եւ արժանի կտակելու դարեւրուն:

Երաշխաւոր վանքին վանահայրը՝ Արտաւադը կը թուէ իր բոյնէն եւ հասնելով մինչեւ Ռուծափ, հակառակ վտանգաւոր ճամբաներու, իր սիրոյ եւ յարգանքի տուրքը կու տայ հայրենիքի մեծ զաւակին որ նոր աստղի մը պէս կու գար յաւերժօրէն փայլելու մեր երկնակամարին վրայ: Նա միայն ըմբռնած եւ հասկցած էր Գողթնեցիին պանդխտութեան ժամանակ, անոր

(10) Յուլիկը Հայրենեաց Հայոց, Վենետիկ, տպ. 1921, էջ 169:

(11) Լիակատար վարք սրբոց, հատոր Բ. Վենետիկ, 1810, էջ 216:

հոգեկան մեծութիւնը եւ քանի մը օրը բաւական եղած էին սիրով կապուելու այդ չարչարուած եւ անվեհեր սրտին հետ:

Մենք իրեն կը պարտինք այս համառօտ բայց զեղեցիկ վկայարանութիւնը. աւա՛ղ որ պակասաւոր հասած է: Նա իր գրութեան մէջ յայտնապէս կ'ըսէ՝ թէ շատ բաներ գրած է, չէ բաւականացած Ռուծափի մէջ գրի առնուածներէն սուրբին վերջին ժամերու մասին, ուղած է ամբողջ

ջական դործ մը ձգել՝ պատկերացնելով այդ դժբախտ օրերուն լիակատար հորիզոնը: Մենք պիտի ունենայինք Եղիշէի սրտով, Փաւստոսի զեղեցկութեամբ եւ Խորենացիի աղգանուէր հոգիով ընդելուզուած մատեան մը:

Հ. ՎԱՀԱՆ ԶՈՎԱՆՆԵՍԵԱՆ

Հալէպ, 22 Յունուար 1953
Տօն Ս. Վահան Գողթնեցիի

ՊԵՆԱՏՀՈՐԻ ԱՐԱՔ ՊԱՏՄԱԳԻՐԸ

ԵՆ

ՀԱՅԵՐԸ

Պենատհորի կեանքը

Շատ քիչ բան, գրեթէ ոչինչ գիտենք Պենատհորի ընտանիքին ու անոր ծագումին մասին: Շատեր գրեցին անոր կենսագրութիւնը, բայց անոնց գործերը կորուսեցան, կամ զոնէ մեզի չհասան: Անոր պտպը ծապըր Պըն Տաուտ՝ Խաւիպի քարտուղար եղած էր, երբ Խաւիպի Հարուն էլ Բաշիտի ժամանակ (786-809) պարենաւորման նախարար էր:

Ինքը հեղինակը Ահմէտ Պըն Եահիա Պըն ծապըր Ալ-Պենատհորի ծնաւ Պաղատտ, Հէճիրէի երկրորդ դարուն վերջերը (թ. դար), դաստիարակուեցաւ Պաղատտի մէջ եւ հոն շատ հմուտ մարդերու դասախօսուեցաւ: Կերեւի որ նա երկու նպատակ ունեցած է իր կեանքին մէջ՝ որ է գրել մեծ զործ մը Արար պետութեան պատմութեան մասին, եւ անոր հասնելու համար վաստը կիւլ, շահիլ մեծամեծներու բարեացակա-

մութիւնը: Պենատհորի մեծապէս յաջողեցաւ այս ձեռնարկին մէջ:

Թէ ի՞նչ ընդունելութիւն ըրաւ ալ-Մաւուն Խալիֆան (813-833) անոր բանաստեղծութիւններուն՝ իրեն ի պատիւ գրուած, չենք գիտեր: Բայց Մուդաուաքըլ Խալիֆան (847-861) զինքը մեծապէս կը պատուէր:

Երկիրներու նուաճման գրքին մէջ, էջ 146, կը պատմէ փոքրիկ պատմութիւն մը՝ Խալիֆային (862-866): Ապա Ալի Ադ-Դանուսի կը պատմէ թէ Պենատհորի միշտ զրամէն կը փախչէր, ուրիշներէն երբեք նուէր չէր խնդրեր, եւ ոչ ալ ապրուստը շահելու արուեստը գիտէր: Ալ-Մուդաւիին շահելու արուեստը գիտէր: Ալ-Մուդաւիին Խալիֆան զինքը քաջալերելու եւ ապրուստը հոգալու համար անոր տուաւ 7000 տիւնար:

252-ին (866) երբ ալ-Մուդաւիին Խալիֆան հրաժարեցաւ եւ անոր յաջորդեց ալ-Մուդաւի, նորէն անոր քով շնորհ գտաւ,

մանաւանդ թէ անոր յանձնեց հինգ տարեկան Ապտուլահ գերախոս որդիին դաստիարակութիւնը:

Երբ 255ին (868) մեռաւ ալ-Մուդազզ (866-869), Ապտուլահ ութ տարեկան էր: Արդեօք շարունակեց թէ ոչ անոր դաստիարակութիւնը՝ մեզի յայտնի չէ. հաւանական է որ շարունակած ըլլայ: Կ'երեւի որ այս դէպքէն քիչ վերջն է որ հրատարակեց իր «Երկիրներու նուաճում»-ին գիրքը: Արդ գրքին մէջ վերջին խալիֆան որ կը յիշէ ալ-Մուդազզ է (866-869), եւ կ'երեւի թէ գիրքը վերջացնելու ատեն արդէն անոր խալիֆայութիւնը վերջացած էր: Գուցէ Մուդազզին խալիֆայութեան ժամանակ արդէն սկսած էր գրքին շարադրութիւնը:

Պէլլատոսորի գրած է դեռ ուրիշ շատ երկեր. բացի պարսկերէնէ արաբերէնի թարգմանելու պարսիկ հեղինակներու գործերը (որոնցմէ է «Արտաշէրի դաշինք» կոչուած գիրքը՝ զոր թարգմանեց ոտանաւոր չափով), շարադրեց ծննդաբանական գիրք մը որ մեզի հասած է «Երեւելիներու անուններու պատմութիւն» անունով:

Ըստ ալ-Ֆիհրիսթիի՝ Պէլլատոսորի «Երկիրներու նուաճում»-ի երկու գիրք շարադրեց. մէկը ընդարձակ եւ միւսը համառոտ: Մեր ձեռքը հասածը համառոտը կը թուի:

Պէլլատոսորի նիւթ պատրաստեց մեծածաւալ պատմական գործի մը զոր Ֆիհրիսթ կը կոչէ «Գիրք դէպքերու եւ անուններու», որ երբ Պէլլատոսորի մեռաւ, 40 պրակէ կը բաղկանար: Գրեց նաեւ բանաստեղծութիւններ, որոնցմէ շատ քիչ բան մեզի հասած է:

Պէլլատոսորի կեանքը շատ տխուր կերպով վերջացաւ. անխոհեմութեամբ թոյն առաւ՝ որ իր միտքը խանգարեց, այնպէս որ ստիպուեցան զինքը խենթանոցի մէջ շղթաներով կապել: Մեռաւ 279ին (892), այն տարին՝ երբ ալ-Մուդազզը (892 -

902) հօրը յաջորդեց խալիֆայութեան մէջ: Հեղինակին տխուր վիճակը շատերուն սիրտը յուզեց, ինչպէս որ կ'երեւի Պէլլատոսորի մակդիրէն, որ անոր տրուեցաւ: Առած թոյնին անունը արաբերէն լեզուով պէլլատոսոր կը կոչուէր:

Պէլլատոսորի մեծ անունի եւ համբաւի արժանի եղած է: Իր գրքին բոլոր էջերը կը ցուցնեն թէ ոչ մէկ ջանք խնայած է արժանահաւատ աւանդութիւնները հաւաքելու: Գոհ չեղած այն աւանդութիւններէն՝ զոր Պաղտատի մէջ լսած էր ամենաուսեալ մարդերու բերնէն, ճամբորդութիւններ կատարեց աւելի լաւ կերպով փնտռելու համար պատմական ճշմարտութիւնները: Ըստ Իպն էլ-Ասիմի՝ այցելեց Հիւսիսային Սիւրիոյ եւ Միջագետքի քաղաքները: Իր պատմութեան մէջ, էջ 146, տող 5, կ'ըսէ թէ գացած է Թէքտիդ՝ արժանահաւատ աւանդութիւնները հաւաքելու համար: Իր ամենամեծ արդիւնքը եղած է այդ աւանդութիւններուն մէջէն ընտրութիւն ընելը: Ինքը կրնար Իրաքի մայրաքաղաքները աւելի մանրամասն նրկարգրել: Իւրաքանչիւր երկրի պատմութիւնը գուցէ ուղէինք աւելի ընդարձակ ներկայացուէր, բայց նկատի առնելու ենք որ ձեռքերնիս հասածը համառոտութիւնն է ընդարձակ գործին՝ որ մեզի չէ հասած:

Պէլլատոսորի դաստիարակուեցաւ Ապսեան խալիֆաներու սեմին շուքին տակ: Ընտանի էր Մուդազզըրլի ու ալ-Մուդազզինի, որով միշտ չողորթութեան հոսանքին մէջ էր, որովհետեւ իր բախտը կը պարտէր իշխող Ապսեան պետութեան, բայց երբեք չչեղեցաւ ճշմարտախօսութենէն:

Պէլլատոսորի գիրքը առաջին անգամ հրատարակած է Մ. Յ. Տը Կուժ՝ Լէյպցիգի մէջ 1866ին. յետոյ հրատարակուեցաւ Գահիրէի մէջ: Բայց մենք նախընտրելով Տը Կուժի հրատարակութիւնը, անոր վրայէն կատարեցինք թարգմանութիւնը

Հայերու եւ Հայաստանի վրայ գրած մասերուն:

Պէլլատոսորի պատմութեան հայկական մասերը ժամանակին թարգմանած է Բադրատ Խալաթեանց ու 1903ին «Հանդէս Ամսօրեայ»-ի մէջ հրատարակել տուած է: Յետոյ 1919ին «Արաբացի մատենագիրներ Հայաստանի մասին» տիտղոսի տակ ուրիշ հեղինակներու հետ տպուած է Վիեննա:

Խալաթեանցի թարգմանութիւնը կատարեալ չէ, որովհետեւ հեղինակին Հայերուն մասին բոլոր գրածները թարգմանած է: Ծատ կարեւոր ու հական տեղեր ուր Հայերուն վրայ կը խօսուի՝ նա զանց րրած է: Գոհացուցիչ ալ չէ թարգմանութիւնը՝ որովհետեւ ուսուսացիւն խրթին եւ անհասկնալի լեզուով եղած է: Մանաւանդ յատուկ անուններու տառադարձութիւնը թույլ չի տար որ ընթերցողը յստակ գաղափար մը կազմէ Պէլլատոսորի գրածներուն վրայ Հայերուն մասին: Խալաթեանցի թարգմանութեան մէջ շատ տեղ բառերը սխալ հասկցուած են ու սխալ թարգմանուած են: Նոյնպէս Հէճիրէի թրականները սխալ դրուած են ու սխալ կերպով քրիստոնէական թուականի վերածուած: Որով հարկ դրացինք ձեռք գարնել ներկայ թարգմանութեան՝ կարգաւ ղետեղելով նոր գլխակարգութիւններու տակ:

Հ. ԱՐԻՍՏԱՍ ԱՊՍԵԱՆ

Ա. - Եւրոպայի ֆակտաւարտը եւ Հայերուն մասնակցութիւնը:

Պատմած են թէ Հերակլ հաւաքեց բազմաթիւ գիտնորներ Յոյներէն, Սիւրիացիներէն, Միջագետքիներէն, ու Հայերէն չուրջ երկու հարիւր հազար հոգի: Անոնց վրայ զօրավար կարգեց իր երեւելիներէն մին ու յառաջապահ դրկեց Ճապար Պըն ալ-Այհամ ալ-Ղասանի՝ որուն ձեռքին տակ էին Սիւրիոյ Լաիմ ու Ճուհամ արար (քրիստոնէայ) եւ ուրիշ ցեղախումբեր:

Եւ ուղեց պատերազմի իսլամներուն դէմ: Եթէ յաղթէին (Արաբները կը հեռացնէին), ապա թէ ոչ պիտի մտնէր Հոռոմներու երկիրը ու երթար քաշուէր Կ. Պոլիս:

Այն ատեն գումարուեցան իսլամները, դարձան անոնց դէմ ու պատերազմեցան Եւրոպայի վրայ՝ սաստիկ եւ տաժանելի պատերազմով մը: Եւրոպայը գետ մըն է եւ իսլամները քսանընթաց հազար հոգի էին: Յոյներն ու անոնց հետեւորդները շղթայով իրարու կապուեցան նոյն օրը որպէսզի փախուստ չփորձեն: Աստուած անոնցմէ եօթանասուն հազար հոգի սպանել տուաւ: Մնացորդները փախան Պաղեստին, Անտիօք, Հալէպ, Միջագետք ու Հայաստան: Եւրոպայի օրը սաստիկ կերպով պատերազմեցան իսլամ կիները(1):

Բ. - Հալէպցիներու գաղթը դէպի Հայաստան:

Հալէպ քաղաքին մօտ արուարձան մը կար որ Հալէպը Հալապ կը կոչուէր: Հոն հաւաքուած էին Թանուխ ցեղախումբը եւ արաբ ուրիշ ցեղեր: Ապու Ռապայտ անոնց հետ հաշտուեցաւ՝ պայմանով որ գլխահարկ վճարեն: Յետոյ իսլամացան ու հոն մնացին մինչեւ Բաշիտ հաւատացեալներու ամիրային (786-809) մահէն վերջ: Այս արուարձանին բնակիչները պատերազմեցան Հալէպցիներու դէմ եւ ուղեցին դանակ (Հալէպցիները) քաղաքէն դուրս հանել: Այն ատեն Հալէպի ցեղին պատկանող Հալէպցիները գրեցին իրենց չորս կողմի արաբ բոլոր ցեղախումբերուն՝ անոնցմէ օգնութիւն խնդրելով: Ամէնէն առաջ անոնց օգնութեան հասնողը եղաւ ալ-Ապսա Պըն Ջաֆար Պըն Ասրմ ալ-Հիլալի՝

(1) Պէլլատոսորի, էջ 135: Այս կտորը եւ յաջորդ երկու կտորները եւ ուրիշ շատ կարեւոր տեղեր թարգմանած չէ Խալաթեանց:

մօրեղբորական ազգականութեան համար, որովհետեւ Մարտալլա Պըն ալ-Մալապսի մայրը Լուպապա Պընդ ալ-Հարրթհ Պըն Հազըն Պըն Պուճայր Պըն ալ-Հուզամ ալ-Հիլալին էր: Որով այդ արուարձանին բնակիչները չկրցան դէմ դնել: Այն ատեն հանեցին զանոնք իրենց արուարձանէն ու զայն աւերեցին: Այդ բանը պատահեցաւ Մուհամմէտ Պըն ար-Րաշիտի (Մուհամմէտ էլ-Ամին 809-813) խոռովութիւններուն ժամանակ: Ասով փոխադրուեցան Գեննեսներին՝ որուն բնակիչները զիրենք ընդունեցան Կերակուրներով եւ զգեստներով: Եւ երբ քաղաքը մտան, ուղեցին տիրել անոր: Այն ատեն քչեցին զիրենք հոնկէ ու ցրուեցան զանազան քաղաքներու մէջ: Անոնցմէ մաս մը դնաց Դէքրիդ, եւ ես հոն տեսայ զիրենք: Ուրիշ մաս մ'ալ դնաց Հայաստան եւ ուրիշ զանազան երկիրներ(2):

Գ. - Սիւ քաղաքը.

Մուհամմէտ Պըն Սաատ ըսաւ. ինծի պատմեց ալ-Ուսգըտի թէ Սիւիայի բնակիչները ելան քաղաքէն եւ հասան Հոռոմներու բարձունքները 194ին (809) կամ 193ին (808): Սիւիա Մայն-Չարպա (Անարպա) բլուրին պատկանող քաղաք մըն է. շինուեցաւ Մուդաուաքըլ ալալ-Լահ խալիֆային օրով (847-861) Մի Պըն Եահիա ալ-Արմանիի ձեռքով (էջ 170):

Դ. - Միջագետքի գրաւումը.

Ինծի պատմեց Տաուտ Պըն Մալուկ Համիտ Ռաքթայի դատաւորը՝ լսելով իր հօրմէն, իր պապէն, Մայմուն Պըն Միհրանէ թէ բոլոր Միջագետքը նուաճեց Իյատ Պըն Ղանմ, եւ թէ Օմար Պըն ալ-Խաթթապ (634-644) զինքը անոր վրայ կառավարիչ կարգեց Ապու Ռապայտայի մահէն վերջ:

(2) Պէլլատհօրի, էջ 145-146:

Ապու Ռապայտա զինքը Միւրիոյ վրայ իր յաջորդը կարգած էր: Օմար Պըն ալ-Խաթթապ կառավարիչ կարգեց (Միւրիոյ) Եգիտ Պըն Ապու Սուֆիանը, անկէ վերջ կարգեց Մուալիան իր կառավարիչ ու հրամայեց Իյատի որ Միջագետքի վրայ արշաւէ:

Ինծի պատմեց ալ-Հիւսէյն Պըն ալ-Ասուատ եւ ըսաւ. մեզի պատմեց Եահիա Պըն Ատամ լսելով բազմաթիւ միջագետքիներէն, Սիւլէյման Պըն Աթա ալ-Գուրաշիէ թէ զրկեց Ապու Ռապայտա Իյատ Պըն Ղանմ զէպի Միջագետք: Մեռաւ Ապու Ռապայտա մինչ ինքը (Իյատ Պըն Ղանմ) հոն էր: Այն ատեն Օմար զինքը հրամայեց կարգեց (Միջագետքի) (էջ 172):

Ե. - Եդեսիոյ հաշտութիւնը.

Ինծի պատմեց Պաքր Պըն ալ-Հայթհամ թէ իրենց պատմած է ան-Նուֆայլի Ապուտալլա Պըն Մուհամմէտ լսելով Սուլէյման Պըն Աթայէ՝ թէ երբ Իյատ Պըն Ղանմ Ապու Ռապայտայի կողմէն զրկուելով նուաճեց Եդեսիան, կեցաւ անոր դրան առջեւ ձիու մը վրայ մեռելի պէս: Հաշտուեցաւ անոր բնակիչներուն հետ որ իրենց մնայ իրենց տաճարը եւ ինչ որ իրենց շուրջը կայ՝ պայմանով որ նոր եկեղեցի չէին կառնար, այլ պահէին ինչ (եկեղեցի) որ ունէին եւ օգնէին Իսլամներուն՝ անոնց թըշնամիներուն դէմ: Այնպէս որ եթէ բան մը դրժեն պայմանադրութենէն, անոնց պաշտպանութիւն չմնայ: Յետոյ Միջագետքի բնակիչները մտան նոյն պայմաններուն մէջ Եդեսիոյ բնակիչներուն պէս:

Մուհամմէտ Պըն Մալուկը կը պատմէ թէ Ալ-Ուսգըտի ըսած է թէ ինչ որ Իյատի մասին լսած ենք աւելի ճշմարիտ է թէ Ապու Ռապայտա մեռաւ էմմաուսի ժամատարին մէջ 18ին (639): Իրեն յաջորդ թողուց Իյատը. այն ատեն անոր (Իյատի) եկաւ Օմարի նամակը որով զինքը կը կարգէր Հոմսի, Գեննեսներին եւ Միջագետքի կառավարիչ: Իյատ քաղեց Միջագետք հինգ զարմա Մայսարա Պըն Մասրուք ալ-Մալապսի եւ իր աջ կողմը Սաֆուան Պըն ալ-Մուաթթալ աւ-Սուլամի: Իսկ Խալիլ Պըն ալ-Ուսլի'տ անոր ձախ կողմէն էր: Կ'ըսուի թէ Խալիլը չքաղեց մէկու մը դրօշին տակ Ապու Ռապայտայէ վերջ, այլ Հոմս մնաց մինչեւ որ հոն մեռաւ 21ին (641) ու Օմարը կտակահատար կարգեց: Ոմանք կը պատմեն թէ մեռաւ Մետինէի մէջ, բայց հաւանական է որ նա Հոմսի մէջ մեռած ըլլայ (էջ 172-3):

զետքի կառավարիչ: Իյատ քաղեց Միջագետք հինգ զարմա Մայսարա Պըն Մասրուք ալ-Մալապսի եւ իր աջ կողմը Սաֆուան Պըն ալ-Մուաթթալ աւ-Սուլամի: Իսկ Խալիլ Պըն ալ-Ուսլի'տ անոր ձախ կողմէն էր: Կ'ըսուի թէ Խալիլը չքաղեց մէկու մը դրօշին տակ Ապու Ռապայտայէ վերջ, այլ Հոմս մնաց մինչեւ որ հոն մեռաւ 21ին (641) ու Օմարը կտակահատար կարգեց: Ոմանք կը պատմեն թէ մեռաւ Մետինէի մէջ, բայց հաւանական է որ նա Հոմսի մէջ մեռած ըլլայ (էջ 172-3):

Զ. - Ռաֆֆայի նուաճումը եւ հաշտութիւնը.

Պատմեցին թէ Իյատի յառաջադաս զուգըր հասաւ մինչեւ Ռաքթա: Յարձակեցան անոր չորս կողմի արուարձաններուն վրայ՝ որ Արարներու կը պատկանէին՝ եւ մշակ ժողովուրդին վրայ: Անոնցմէ առին աւար, ու փախաւ ով որ կրցաւ ազատիլ, ու մտան (փախչողները) Ռաքթա քաղաքը: Իյատ յետ դորահաւաք ընելու հասաւ իր զինուորներով մինչեւ որ իջաւ Եդեսիոյ դուռը որ (Ռաքթա) քաղաքին դռներէն մին էր: Բնակիչները Իսլամներուն վրայ ժամ մը նետաձգութիւն ըրին մինչեւ որ անոնցմէ ոմանք վիրաւորուեցան: Յետոյ ինքը քաշուեցաւ անոնցմէ որպէսզի իրեն չհասնին անոնց (թշնամիներուն) քարերն ու նետերը, ու հեծաւ շրջեցաւ քաղաքին շուրջ, եւ անոր դռներուն քով պահակազօրք դրաւ: Յետոյ դարձաւ իր զինուորներուն, սփռեց ձիաւորները, ու սկսաւ զալ զիւղերէն զերիներով ու առատ կերակուրով: Արդէն հունձքը կատարուած էր, եւ երբ հինգ վեց օր անցաւ եւ այդ վիճակին մէջ էին, քաղաքին պատրիկը (իշխանը) պատգամաւոր

զրկեց Իյատի խնդրելով (կեանքի) ապահովութիւնը: Իյատ հաշտուեցաւ հետը, ապահովութիւն չնորհեց բոլոր բնակիչներուն կեանքին, անոնց զաւակներուն, ինչքերուն եւ քաղաքին: Իյատ ըսաւ. Երկիրը մերն է, զայն նուաճած ու գրաւած ենք, ու զայն թողուց անոնց ձեռքերուն մէջ պայմանով որ տուրք վճարեն: Երկրէն հանեց այն (քրիստոնէայ եւ հրեայ) բնակիչները որոնք տուրք չուզեցին վճարել: Անոնք Իսլամներու թողուցին իրենց գոյքերու տասանորդը:

Իյատ զլիսահարկ դրաւ (զլիսահարկ նշան) անոնց վիզերուն վրայ. ստիպեց ամէն մարդ որ տարին տինար մը վճարէ: Այս տուրքէն զերծ էին կիներն ու տղաները: Տինարէն զատ անոնց վրայ դրաւ ցորենի չափեր (քաֆիլ), քիչ մը ձէթ, քացախ եւ մեղր: Եւ երբ Մուալիա կառավարիչ եղաւ, հաստատեց այս զլիսահարկը անոնց վրայ: Յետոյ անոնք բացին քաղաքին դռները եւ Իսլամներուն շուկայ մը շինեցին Եդեսիոյ դուռ կոչուած տեղը եւ Իյատ զրկեց անոնց:

«Յանուն ամենագութ եւ ամենողորմ Աստուծոյ. այս է դաշինքը զոր շնորհեց Իյատ Պըն Ղանմ Ռաքթայի բնակիչներուն»: Այն օրը որ մտաւ, ապահովութիւն շնորհեց անոնց անձերուն, ինչքերուն եւ եկեղեցիներուն որ չաւերուին ու չբնակուին եթէ վճարեն զլիսահարկը, մատնութիւն չընեն, նոր եկեղեցի կամ մատնութիւն չընեն, նոր եկեղեցի կամ տաճար չկառուցանեն, դուրսը ցոյց չտան ոչ զանգակատուն, ոչ թափօր եւ ոչ խաչ: «Աստուած թող վկայէ եւ ան բաւական է իր վկայ» ու կնքեց զայն Իյատ իր կնիքով: Կը պատմուի թէ Իյատ պարտադրեց բոլոր չափահաս մարդերը որ վճարեն (տարեկան) չորս տինար: Բայց աւելի ստույգ է թէ Օմարն է որ յետոյ զրկեց Ռապայր Պըն Մալուկի իր գործակալին որ պարտադրէ ամէն չափահաս մարդու չորս տինարը, ինչպէս որ իրօք պարտաւորեց

ոսկիի (տէր) մարդերը (հարուստները) (էջ 173-174):

Է. - Խառանի հաշտութիւնը:

Յետոյ Պայտ քաղեց Խառանի վրայ, ինչպէս Պաճուտտա, ու զրկեց իր յառաջապահ զոնդը: Խառանի բնակիչները զոնցեցին զոնքն անոնց առջեւ: Յետոյ հետեւեցաւ (յառաջապահ զոնդին), եւ երբ հասաւ, ոչ-քրիստոնեայ բնակիչները իրեն լուր զրկեցին իմացնելով անոր թէ իրենց ձեռքերուն մէջ կայ քաղաքին մէկ մասը եւ իրմէ խնդրեցին որ Եղեսիոյ երթայ, եւ ինչ հաշտութիւն որ բնեն, իրենք ալ հաւան են: Թողուցին որ քրիստոնեաներուն հետ վարուի ինչպէս որ ուզէ մինչեւ որ անոնք (քրիստոնեաները) իրեն վան: Քրիստոնեաները այդ բանն իմացան, իրեն լուր զրկեցին թէ իրենք ալ կ'ընդունին ինչ որ խառանցիներուն առաջարկեց, ու անոր հպատակեցան (էջ 174):

Ը. - Եղեսիոյ կրկին գրաւումը:

Եկաւ Եղեսիա. բնակիչները հաւաքուած էին անոր դէմ: Մէկ ժամ շարունակ նետահարեցին Իսլամները. եւ երբ անոնց կտրիճները դուրս ելան քաղաքէն, պարտուեցան Իսլամներէն մինչեւ որ քաղաք քաշուեցան: Քիչ մը կ'ուռելէ վերջ հաշտութիւն խնդրեցին ու կեանքի ապահովութիւն: Պայտ անոնց հաւանեցաւ ու անոնց զիր զրկեց որուն օրինակը այս է. «Յանուն ամէնողորմ եւ ամենազուրկ Աստուծոյ՝ այս զիրը Պայտ Պըն Ղանմէ Եղեսիոյ Եպիսկոպոսին. եթէ զուր բանաք ինծի քաղաքին դուրս՝ պայմանաւ որ ամէն այր մարդու համար մէկ տինար վրձարէք եւ երկու քոռ ցորեն, ապահով կ'ըլլան ձեր անձերը, ինչքերը, ու ձեզի հետեւողները: Դուք պարտական էք առաջ-

նորդել մոլորեալին, չտիւնի ճամբաներն ու կամուրջները եւ առաջնորդել (ճամբայ կորսնցնող) Իսլամներուն: Աստուած վրկայ թող ըլլայ, եւ Աստուած բաւական է իւր վկայ»:

Ինծի պատմեց Տառու Պըն Ապտըլ Համիտ լսելով իր հօրմէն, իր պապէն թէ հետեւեալն է Եղեսիոյ ժողովուրդին դրած թուղթը:

«Յանուն ամենազուրկ եւ ամէնողորմ Աստուծոյ. այս է զիրը Պայտ Պըն Ղանմէ եւ հետը եղող Իսլամներէ Եղեսիայի բնակիչներուն. Ես անոնց ապահովութիւն շնորհեցի իրենց արիւններուն, ինչքերուն, զաւակներուն, կիներուն, քաղաքին եւ շաղաղանքին, եթէ անոնք վճարեն իրաւունքը որ պարտական են ձեզի եւ ձեռք ունինք անոնց վրայ, որ չտիւնի կամուրջները եւ առաջնորդեն մոլորածները: Աստուած վրկայ ըլլայ, եւ իր հրեշտակներն ու իսլամները» (էջ 174):

Թ. - Սուլայսաթի առումը:

Պատմուեցաւ թէ ապա եկաւ Պայտ զէպի Խառան եւ ուղարկեց Սաֆուան Պըն ալ-Մու'աթթալ ու Հապիպ Պըն Մաւլամա ալ-Սիհրի զէպի Սուլայսաթ: Պայտ հաշտուեցաւ Խառանի բնակիչներուն հետ՝ Եղեսիոյ հաշտութեան օրինակին վրայ, ու բացին անոր դռները: Ինքը հոն կառավարիչ նշանակեց մարդ մը ու զնաց զէպի Սուլայսաթ: Հոն դտաւ Սաֆուան Պըն ալ-Մու'աթթալ ու Հապիպ Պըն Մաւլամա քաղաքին առջեւ կանգնած: Անոնք զրաւած էին անոր (Սուլայսաթի) զիւղերն ու բերդերը: Բնակիչները հետը հաշտուեցան Եղեսիայի հաշտութեան հիման վրայ: Պայտ դարձաւ Եղեսիա ուսկից մեկնած էր (էջ 175):

(Շարունակելի)

Մ Ա Ր Ա Շ Ա Հ Ա Յ Բ Ա Ր Ք Ե Ր

Բուն բարեկենդանի կիրակին է: Մարաշը ծածկուած է ձիւնի տակ: Բուխուրիկները հանգարտ կը ծխեն: Տուներէն ներս, ալուրին շուրջ հաւաքուած են ընտանիքի անդամները: Քարիւղէ լապտերի մը տմոյն շողերու ներքեւ, տանտիկինը սփռոց մը կը տարածէ դետին: Ընթրիքը պատրաստ է: Ամէն ոք հաւկիթ կ'ուտէ այս երեկոյ զուարթ բարեկենդանը հաւկիթով փակելու եւ Չատիկին ալ հաւկիթով բանալու համար:

Խօսակցութեան տաք միջոցին պապիկը կ'ըսէ փոքրիկներուն. «Մօտ օրէն քառասուն զինուորներ պիտի գան մեր տունը, ու մենք ամէն օր զինուոր մը պիտի մորթենք»: Քառասուն զինուորները, պահքի քառասուն օրերն են:

Յաջորդ օրը, մեծ պահքի առաջին երկուշաբթին է, որ «Հարածի տօն» կը կոչուի: Գինեւէրները վերջին անգամ մըն ալ կը զինովնան քառասուն օր ապաշխարելէ առաջ:

Ամէն տան մէջ եռուղեւ մը կայ այսօր: Պառաններ ու մանկամարդեր կերակուրներու ամանները կը լուան մեծ խնամքով: Իւղի հոտն անգամ պէտք է ջրնուի տունէն: Կը բռնեն նաեւ կատուն, տան բրդոտ թագուհին, ու կը լուան անոր բերանը, որ չըլլայ թէ պնակները լըզելով իւղոտէ զանոնք:

Կէսօրուան ճաշին, ամանի մէջէն, թրթու ապուրի շողին նազելով կը բարձրանայ երգիքն ի վեր: Ընտանիքի անդամները ստիպուած են ուտել այդ ապուրէն, որպէսզի իրենց ստամոքսին բոլոր իւղոտ կերակուրները հալին ու մարսուին:

Այսօր, սոխերու կոյտի մէջէն խոշոր սոխ մը կ'ընտրեն եւ վրան եօթը փետուր

անցրնելով կը կախն դաշն առաստաղէն: Շարաթը անգամ մը, փետուր մը կը հանեն սոխին վրայէն: Այդ կերպով յայտնի կ'ըլլայ ընտանիքի անդամներուն թէ քանի՞ շարաթ մնացած է Չատիկին:

Երեքշաբթին՝ Մալիի տօն կը կոչուի: Տան մէջ աւելցած կերակուրներով թող քիչ մըն ալ խեղճ անասունները խնճոյք ընեն:

Չորեքշաբթին՝ Գելի (Գայլի) օրն է: Կ'ըսեն թէ միս եւ ոսկր մէջտեղէն վերցրուած ըլլալով, անօթի դայլեր քաղաքներու վրայ կը յարձակին:

Այս երեք օրերուն՝ խանութները փակ կը մնան: Չորեքշաբթի առտու եկեղեցին ի է հաւատացեալներով: Քահանան ալ է մէնուն զիւտուն վրայ մոխիր կը ցանէ. եւ կամ տան մէջ իրարու մոխիր կը ցանեն: Մոխիր կը ցանուի նաեւ տան սեմին. ներս մանողը ալ լեւա աղաչարարութեան տուն կը մտնէ:

Մեծ պահքի առաջին շարաթը սովորութիւն եղած է քեօփթէ չուտել. «մէջէն ոսկոր կ'ըլլէ» կ'ըսեն:

Իսկ եթէ մանուկներու մէջ մածուն ուտելու փափաք արթննայ, մայրիկը՝ նաշիհի մէջ ջուր խառնելով եւ հաց բրդելով իր տղոց կը կերցնէ իրր մածուն: Ո՛րքան միամիտ էին հին օրերու տղաքը: Չեմ գիտեր թէ ծնողներ՝ իրենց այս անմեղ գիւտով պիտի կարենա՞ն խաբել նաեւ այսօրուան վառվառ մանուկները:

Մեծ պահքի առաջին երկուշաբթին, սովորութիւն է եօթը տեսակ նիւթերով Զամպուռ կոչուած ուտելիքը պատրաստել եւ մեծ ամանի մը մէջ պահելով՝ շարաթը գոնէ անգամ մը ուտել անկէ, ամբողջ մեծ պահքի ընթացքին: Այս ուտելիքին